

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

9 ԲՇ. ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՄԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ՅԱՆՆԱՅԷ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԷՆ

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 3.24-29 Ուրեմն Օրենքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատքով արդարանանք: Բայց հիմա որ հաւատքը եկաւ, այլեւս դաստիարակի պէտք չունինք, որովհետեւ Յիսուս Քրիստոսի հաւատաւով՝ բոլորդ ալ Աստուծոյ որդիներ եղաք: Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք, այլեւս Քրիստոս է որ կ'ապրի ձեր մէջ: Ալ ո՛չ Յրեայի եւ հեթանոսի խտրութիւն կայ, ո՛չ ստրուկի եւ ազատ մարդու, ո՛չ ալ արուի եւ էգի, որովհետեւ Քրիստոսի միանալով՝ բոլորդ ալ մէկ եղաք: Արդ ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ դուք Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի Լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Ջաքարիայի տունը մտնելով՝ եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է զաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեմ. Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոմով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինծի, քանի հզօրն Աստուած ինծի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահագրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

Մարիամ Եղիսաբեթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

10 ԳՇ.

ՍՐԲՈՑՆ՝ ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ԶԱՐԻՐԱՊԵՏԻՆ, ՇՄԱԲՈՆԻ՝ ԱԶԳԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՊՈՂԻԿԱՐՊՈՍԻ՝ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ԶՄԻՒՆԻՈՅ

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԷՆ 1.12-14

Ապա առաքեալներ իջան Չիթենեաց լեռնէն, որ Երուսաղէմէն հազիւ մէկ քիլոմէթր հեռաւորութիւն ունի. եկան քաղաք, եւ գացին այն վերնատունը ուր կը մնային: Ասոնք էին՝ Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողիմէոս եւ Մատթէոս, Յակոբոս Ալփեան եւ Շմաւոն Նախանձայոյզ, եւ Յուդա Յակոբեան: Բոլորը միասնաբար յարատեւ աղօթքով կ'անցընէին օրերը, ուրիշ կիներու, Յիսուսի մօր Մարիամի եւ Յիսուսի եղբայրներուն հետ միասին:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 6.6-13 Յիսուս շրջակայ գիւղերը պտըտելով՝ կ'ուսուցանէր: Իր մօտ կանչելով տանսերկու աշակերտները, սկսաւ զանոնք զոյգ-զոյգ դրկել՝ չար ոգիներուն վրայ իշխանութիւն տալով անոնց, ու պատուիրեց.- ճամբու համար ձեզի հետ ոչ մէկ բան առէք՝ բացի գաւազանէ մը. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ ալ դրամ ձեր գօտիներուն մէջ: Այլ հողաթափ հագէք եւ աւելորդ հագուստ մի՛ առնէք ձեզի հետ:

Ապա աւելցուց.- Ո՛ր տունը որ մտնէք եւ ձեզ ընդունին, հոն իջեւանեցէք մինչեւ որ մեկնիք հոնկէ: Իսկ երբ դուրս ելլէք ոեւէ տեղէ, որուն բնակիչները ձեզ չեն ընդունիր եւ չեն լսեր, ձեր ոտքի փոշին թօթուեցէք՝ իբրեւ վկայութիւն անոնց դէմ:

Աշակերտները գացին եւ սկսան ժողովուրդին քարոզել որ ապաշխարեն: Բազմաթիւ չար ոգիներ կը հանէին, շատ մը հիւանդներ իւղով կ'օծէին եւ զանոնք կը բժշկէին:

11 ԴՇ. ՊԱՅՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՏԻՆԵՐՈՒՆ 2.1-17

Ինչ կը վերաբերի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի գալուստին եւ անոր քով մեր հաւաքուելուն, կ'աղաչեմ, եղբայրներ, թող շուտով ձեր միտքերը չաղտորին եւ տակնուվրայ չըլլաք, երբ լսէք թէ Տիրոջ Օրը եկած հասած է: Մենք այդպիսի բան չենք ըսած, ո՛չ Յոգիին յայտնութեամբ, ո՛չ մեր քարոզութեամբ եւ ո՛չ ալ նամակներով, որպէս թէ մեր կողմէ գրուած:

Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ ոեւէ ձեւով: Որովհետեւ Տիրոջ Օրը պիտի չգայ՝ մինչեւ որ նախ չգայ Տիրոջ դէմ վերջին ապստամբութիւնը, եւ չյայտնուի անօրէնութեան մարմնացումը եղող մարդը, կորուստի սահմանուած հակառակորդը, որ պիտի ընդդիմանայ աստուած կոչուած եւ մարդոցմէ պաշտուած ոեւէ բանի: Մինչեւ իսկ Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինքին համար պիտի յայտարարէ՝ թէ աստուած է:

Չէ՞ք յիշեր որ այս բաները ըսի ձեզի, երբ տակաւին ձեր մօտ էի: Դուք լաւ գիտէք՝ թէ ինչ բանն է որ չի ձգեր որ այդ հակառակորդը հիմա յայտնուի, մինչեւ ժամանակը գայ: Ներկայիս արդէն իսկ անօրէնութեան այդ խորհրդաւոր ոյժը գործի վրայ է. բայց պիտի չյայտնուի՝ մինչեւ որ անոր արգելք եղողը մէջտեղէն վերցուի: Միայն այն ատեն պիտի յայտնուի Անօրէնը, զոր Տէր Յիսուս պիտի սպաննէ իր բերնին շունչով եւ պիտի ոչնչացնէ իր յայտնութեամբը, իր գալստեան ատեն: մինչ այդ, Անօրէնը, որ Սատանային ներգործութեամբ պիտի գայ, ամենայն զօրութեամբ կեղծ հրաշքներ եւ սքանչելիքներ պիտի կատարէ, եւ ամէն տեսակի չար խաբէբայութեամբ պիտի հրապուրէ անոնք՝ որ կորուստի ճամբուն մէջ են: Քանի որ անոնք չսիրեցին եւ չընդունեցին ճշմարտութիւնը որ զիրենք պիտի փրկէր, Աստուած ալ մոլորութեան ազդեցութեան պիտի ենթարկէ զանոնք, որպէսզի ստութեան հաւատան: Այսպիսով պիտի դատապարտուին բոլոր անոնք՝ որոնք չհաւատացին ճշմարտութեան, այլ՝ անիրաւութեան գործելուն մէջ փնտռեցին իրենց հաճոյքը:

Բայց մենք միշտ Աստուծոյ գոհութիւն պէտք է յայտնենք ձեզի համար, եղբայրներ, որովհետեւ Տէրը սիրեց ձեզ: Աստուած ձեզ ընտրեց՝ որպէս փրկութեան առաջին պտուղները, որպէսզի իր սուրբ ժողովուրդը ըլլաք Սուրբ Հոգիին միջոցաւ եւ ճշմարտութեան հաւատալով: Աստուած ձեզ այդ փրկութեան հրաւիրեց մեր քարոզած Աւետարանով, որպէսզի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի փառքը ունենաք:

Ուստի, եղբայրներ, հաստատուն մնացէք եւ ամուր պահեցէք աւանդութիւնները որ սորվեցաք մեզմէ, ըլլա՛յ խօսքով, ըլլա՛յ նամակով: Եւ մեր Տէրը ինք՝ Յիսուս Քրիստոս, եւ Աստուած՝ մեր Հայրը, որ մեզ սիրեց եւ իբրեւ շնորհք՝ մնայուն մխիթարութիւն մը եւ հաստատուն յոյս մը տուաւ մեզի, թող սրտապնդեն եւ զօրացնեն ձեզ, որպէսզի միշտ խօսիք ու գործէք ինչ որ բարի է:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14.25-27 Բազմաթիւ ժողովուրդ Յիսուսի հետ կ'երթար: Յիսուս անոնց դառնալով՝ ըսաւ.- Ով որ ինձի կու գայ եւ զիս աւելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կի՛նն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինձի աշակերտ ըլլալ: Որովհետեւ ով որ իր խաչը չ'առնէր եւ ինձի չի հետեւիր, ինձի աշակերտ

չի կրնար ըլլալ:

12 ԵՇ.

ՍՐԲՈՑՆ՝ ԵԻՍՏՈՒՏԻՈՍԻ, ՕՔՍԵՆՏԻՈՍԻ, ԵԻԳԻՆԵՈՍԻ, ՈՎՐԵՍՏԵՍԻ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՐՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՄ 5.1-5 Հիմա որ ալ հաւատքով արդարացած ենք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հաշտուած ենք Աստուծոյ հետ: Քրիստոս ինք մեզի համար կարելի դարձուց՝ հաւատքով հասնիլ այն շնորհքին, որուն մէջ կ'ապրինք հիմա եւ կը պարծենանք՝ Աստուծոյ փառքին արժանանալու յոյսով: Եւ ոչ միայն այսքան. այլ տակաւին կը պարծենանք նաեւ մեր նեղութեանց մէջ, գիտնալով որ նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուծոյ սէրը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Յոգիին միջոցաւ:

ԱԻԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 5.1-12 Յիսուս բազմութիւնը տեսնելով լեռ ելաւ եւ հոն նստաւ: Իր աշակերտները հաւաքուեցան իր շուրջ, եւ ինք սկսաւ անոնց սորվեցնել, ըսելով.-
Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:
Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ մխիթարութիւն պիտի գտնեն:
Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:
Երանի՛ անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագենան:
Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ ողորմութիւն պիտի գտնեն:
Երանի՛ անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն:
Երանի՛ անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:
Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:
Երանի՛ ձեզի, երբ մարդիկ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալնուդ համար: Տնծացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է

երկինքի մէջ: Յիշեցէք որ նոյն ձեւով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներն ալ:

13 ՈՒՐ. ՊԱՅՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ 3.1-18 Ի վերջոյ, եղբայրներ, աղօթեցէք մեզի համար, որպէսզի Տիրոջ խօսքին տարածման գործը արագ ընթանայ եւ ամէն տեղ փառաւոր արդիւնքի հասնի, ինչպէս ձեր մօտ եղաւ: Աղօթեցէք նաեւ, որ Աստուած մեզ ազատէ անպատկառ եւ չար մարդոցմէ, որովհետեւ ամէնքը չեն հաւատար Աւետարանի պատգամին: Բայց դուք վստահեցէք Տիրոջ, որ պիտի զօրացնէ ձեզ եւ հեռու պահէ Չարէն: Եւ Տէրը մեզի վստահութիւն կու տայ, թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք՝ կը կատարէք ու պիտի շարունակէք կատարել:

Թող Տէրը ձեր սիրտերը ուղղէ, որպէսզի ճանչնաք Աստուծոյ սէրը եւ Քրիստոսի ցուցաբերած համբերութիւնը:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով կը պատուիրենք ձեզի, եղբայրներ, որ հեռու մնաք ոեւէ հաւատակից եղբօրմէ՝ որ ծուլութեամբ կ'ապրի, եւ ոչ թէ այն օրինակով որ մենք ձեզի տուինք: Որովհետեւ դուք ալ գիտէք՝ ինչպիսի օրինակ մը տուինք ձեզի, որպէսզի անոր հետեւիք: Երբեք ծուլութեամբ չապրեցանք ձեր մօտ, ոչ ալ ձրի կերպով մէկու մը հացը կերանք: Այլ՝ քրտինքով ու տքնութեամբ գիշեր ցերեկ կ'աշխատէինք, ձեզմէ ոեւէ մէկուն բեռ չըլլալու համար: Ո՛չ թէ որովհետեւ իրաւունք չունէինք մեր սնունդն ու բնակարանը ձեզմէ ստանալու, այլ՝ կ'ուզէինք որ մեր անձերը ձեզի օրինակ դառնան եւ մեր օրինակին հետեւիք: Արդարեւ, ձեր մօտ եղած ատեն ալ շարունակ կը պատուիրէինք ձեզի, ըսելով. «Չաշխատողը թող չուտէ»: Մինչդէռ հիմա կը լսենք, թէ ձեզմէ ոմանք ծուլութեամբ կ'ապրին, առանց ոեւէ գործ ընելու, միակ գործ ըրած՝ ուրիշներու գործին խառնուիլը: Այնպիսիներուն՝ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը պատուիրենք եւ կը խնդրենք, որ սովորական աշխատանքին վերադառնան եւ իրենց աշխատանքով իրենց հացը վաստակին:

Սակայն դուք, եղբայրներ, բարիք գործելէ մի՛ ձանձրանաք: Իսկ եթէ ոեւէ մէկը չհնազանդի մեր այս նամակով տուած պատուէրին, զայն նկատի առէք եւ բարեկամութիւն մի՛ ընէք հետը, որպէսզի ամչնայ: Բայց եւ այնպէս՝ թշնամիի տեղ մի՛ դնէք, այլ իբրեւ եղբայր խրատեցէք:

Թող խաղաղութիւն պարգեւող Տէրը ինք խաղաղութիւն տայ ձեզի, ամէն ատեն եւ ամէն կերպով: Տէրը ձեր բոլորին հետ ըլլայ:

Այս ողջոյնը ես՝ Պօղոս, իմ ձեռքովս է որ կը գրեմ: Նամակներուս մէջ ստորագրութիւնս այս է, այսպէս է իմ գիրս:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ:

**ԱՒԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15.1-7** Շատ մը մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու

գային՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով.- Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ:

Յիսուս հետեւեալ առակը պատմեց անոնց.- Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Եւ երբ գտնէ՝ ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. *«Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»*: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին:

14 ՇԲ.

**ՍՐԲՈՑՆ՝ ՅԱԿՈՒԲՅ ՄԾԲԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ՄԱՐՈՒԳԵԻ ՃԳՆԱԴՈՐԻՆ ԵՒ
ՄԵԼԻՏՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 13.17-21** Ստի՛կ ըրէք ձեր առաջնորդներուն խօսքը,

որովհետեւ անոնք անքուն կը հսկեն ձեր հոգիներուն համար, գիտնալով՝ որ հաշիւ պիտի տան ձեզի համար. եւ հնազանդ եղէք անոնց, որպէսզի ուրախութեամբ կատարեն իրենց պաշտօնը եւ ո՛չ թէ հառաչելով, որովհետեւ աստիկա ձեր օգուտին համար չ'ըլլար:

Աղօթեցէ՛ք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք թէ մեր խիղճը մաքուր է, եւ կ'ուզենք ամէն բանի մէջ ուղիղ գործել: Մանաւանդ կ'աղաչեմ որ աղօթք ինծի համար, որպէսզի կարենամ աւելի շուտ ձեզի վերադառնալ:

Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ՝ ամէն տեսակ բարեգործութեամբ իր կամքը կատարելու, որովհետեւ ի՛նքն էր որ մեռելներէն յարուցանեց մեր Տէր Յիսուսը, ան՝ որ իր արիւնով կնքուած յաւիտենական ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին: Աստուած ինչ որ կը կամենայ՝ թող ներգործէ մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

**ԱՒԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 9.39--10.10** Յիսուս ըսաւ. *«Աշխարհ եկայ յայտնելու թէ*

որոնք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»:

Փարիսեցիներէն ոճանք որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք: Չաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ինք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:

15 ԿԻՐ.

Դ. ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ 38.1-8 Այն օրերուն Եզեկիա թագաւոր հիւանդացաւ եւ մահուան անկողին ինկաւ: Եսայի մարգարէն, Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըսաւ. «Տէրը այսպէս կ'ըսէ.- Քու տանդ համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ նշանակելով, որովհետեւ կեանքիդ օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ հաճելի է քեզի»:

Եւ Եզեկիա դառնօրէն լացաւ: Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ Եզեկիային ըսէ.- Այսպէս կ'ըսէ Տէրը, քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. "Լսեցի աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛ այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ պիտի պաշտպանեմ": Եւ որպէսզի գիտնաս թէ Աստուած իր խոստումը պիտի կատարէ, Տէրը հետեւեալ նշանը կու տայ քեզի: Տե՛ս, քու հօրդ՝ Աքազի արեւու ժամացոյցին ստուերը տասներորդ աստիճանին վրայ ինկեր է հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան ետ պիտի դարձրնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն տասը աստիճան ետ գնաց:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 1.1-14 Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած

զինք ամեն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր որ աշխարհը ստեղծեց: Որդին, Յօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Անկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած անուընդ ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անկա՛ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ. «Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ. «Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտենական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ. «Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ է:

Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս:

Անոնք հազուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալլես զանոնք եւ հազուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք. «Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեն որպէս պատուանդան»:

Զէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 17.1-10 Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

«Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցներ: Յետեւաբար զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցուր մեր հաւատքը»:

Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ», վստահ եղէք

որ պիտի հնազանդի ձեզի:

Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. «Անմիջապէս գնա՛, ծաշդ կեր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծե՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեն կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»: